



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 24 » հոկտեմբերի 2014թ.

N 207/Կ

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԾԱԽՄԱՏԻ 9-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԿԱԶՄԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ԼՂՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Ստեղծել ԼՂՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի կազմկոմիտե՝ համաձայն հավելված N 2-ի:
3. 2014թ նոյեմբեր - 2015թ ապրիլ ամիսներին անցկացնել ԼՂՀ դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադան:
4. Նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ Ռ.Մուսայելյանին՝ իրականացնել օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շախմատի ֆեդերացիայի, ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժինների հետ համատեղ համակարգել օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացը:
5. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



Ս. ԱՍՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽԱՍՏԻԳՐ

ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ

(2014-2015 թթ)

1. Նպատակները և խնդիրները

Դպրոցականների շախմատի օլիմպիադայի նպատակներն ու խնդիրներն են.

- նպաստել ԼՂՀ դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի զարգացմանը, լայն թափ հաղորդել նրա մասսայականացմանը,
- շախմատ մարզաձևը նպատակաուղղել սովորողների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը,
- նպաստել դպրոցականների ունակությունների և հմտությունների զարգացմանը, նպատակաուղիվածության դաստիարակմանը,
- ի հայտ բերել շտրիպի մարզիկներին՝ նրանց հետագա մարզական կատարելագործումը ապահովելու համար:

2. Օլիմպիադայի ղեկավարումը.

Օլիմպիադայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շախմատի ֆեդերացիայի, ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության բաժինների աջակցությամբ:

3. Օլիմպիադայի փուլերը, մասնակիցները և անցկացման ժամկետները.

Օլիմպիադայի մրցաշարերին կարող են մասնակցել բոլոր դպրոցականները՝ առանց տարիքային սահմանափակման: Օլիմպիադան առանձին է անցկացվում հիմնական և ավագ դպրոցների աշակերտների միջև՝ անհատական-թիմային հաշվարկով: Միջնակարգ դպրոցները հնարավորության դեպքում կարող են ստեղծել երկու թիմ՝ մինչև 9-րդ դասարան ներառյալ, մասնակցելու հիմնական դպրոցների հետ մի ենթախմբում և 9-րդ դասարանից բարձր՝ ավագ դպրոցների հետ մյուս ենթախմբում:

4. Հիմնական դպրոց և միջնակարգ դպրոցի մինչև 9-րդ դասարան ներառյալ.

Այդ դպրոցների աշակերտների համար օլիմպիադան անցկացվում է 4 փուլերով:

1-ին փուլ - ներդպրոցական մրցումներ:

Այս փուլի նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունը դրվում է դպրոցների տնօրենների վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր հիմնական դպրոցներում և միջնակարգ դպրոցների մինչև 9-րդ դասարաններում ներառյալ կազմակերպվում և անց են կացվում ներդպրոցական մրցումներ՝ դպրոցի հավաքական թիմ /թիմը բաղկացած պետք է լինի 3 աշակերտից, որոնցից առնվազն 1-ը՝ աղջիկ/ ընտրելու նպատակով, որը և կմասնակցի հաջորդ՝ շրջանային փուլին:

Ժամկետը՝ 2014թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 15-ը:

2-րդ փուլ – շրջանային / ք. Ստեփանակերտի / մրցումներ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած դպրոցականները: Անցկացվում է մեկ ընդհանուր մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով, որի արդյունքներով որոշվում են 3 հաղթողներ և լավագույն արդյունք ցույց տված 1 աղջիկ /մրցաշարի ընթացքում նույն դպրոցը ներկայացնող մասնակիցները միմյանց հետ չպետք է մրցեն/: Թիմային հաշվարկում գումարվում են յուրաքանչյուր դպրոցը ներկայացնող 3 մասնակիցների անհատական արդյունքները, և որոշվում է հաղթող թիմը, որը և իրավունք է ստանում մասնակցել հաջորդ՝ հանրապետական փուլին:

Ժամկետը՝ 2014թ. նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 15-ը:

3-րդ փուլ - հանրապետական մրցումներ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած դպրոցականները /շրջանային մրցումների հաղթող թիմերը/: Անցկացվում է մեկ ընդհանուր մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով, որի արդյունքներով որոշվում են 1-ին և 2-րդ տեղերը զբաղեցնող թիմերը, որոնք և իրավունք են ստանում մասնակցել Հայաստանի հանրապետությունում դպրոցականների շախմատի 9-րդ օլիմպիադայի եզրափակիչ 4-րդ փուլին:

Ժամկետը՝ 2015թ. մարտի 25-ից մինչև ապրիլի 15-ը:

Անցկացման վայրը՝ ք. Ստեփանակերտ:

4-րդ փուլ - եզրափակիչ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած 18 դպրոցների թիմերը: Այն մարզը, որտեղ տեղի կունենա մրցաշարի եզրափակիչ փուլը, իրավունք է ձեռք բերում եզրափակչում ներկայացնել ևս մեկ թիմ:

Անցկացվում է մեկ ընդհանուր մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով, որի արդյունքներով որոշվում են 3 հաղթողներ և լավագույն արդյունք ցույց տված 1 աղջիկ /մրցաշարի ընթացքում նույն դպրոցը ներկայացնող մասնակիցները միմյանց հետ չպետք է մրցեն/: Թիմային հաշվարկում

գումարվում են յուրաքանչյուր դպրոցը ներկայացնող 3 մասնակիցների անհատական արդյունքները, և որոշվում է հաղթող թիմը:

Ժամկետը՝ 2015թ. մայիս

5. Ավագ և միջնակարգ դպրոց.

Ավագ և միջնակարգ դպրոցների 9-րդ դասարանից բարձր աշակերտների համար օլիմպիադան անցկացվում է 3 փուլերով:

1-ին փուլ-ներդպրոցական մրցումներ:

Այս փուլի նախապատրաստման և անցկացման պատասխանատվությունը դրվում է դպրոցների տնօրենների վրա: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր ավագ և միջնակարգ / 9-րդ դասարանից բարձր / դպրոցները կազմակերպում և անց են կացնում ներդպրոցական մրցումներ՝ դպրոցի հավաքական թիմ /թիմը բաղկացած պետք է լինի 3 աշակերտից, որոնցից առնվազն, 1-ը՝ աղջիկ/ ընտրելու նպատակով, որը և կմասնակցի հաջորդ՝ հանրապետական փուլին:

Ժամկետը՝ 2014թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 15-ը:

2-րդ փուլ – հանրապետական մրցումներ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած դպրոցականները /ներդպրոցական մրցումների հաղթող թիմերը/: Անցկացվում է շրջանային /2-5 թիմերի դեպքում/ կամ շվեյցարական /6 և ավելի թիմերի դեպքում/ մրցակարգով: Շվեյցարական մրցաշարերում որոշվում են 3 հաղթողներ և լավագույն արդյունք ցույց տված 1 աղջիկ /մրցաշարի ընթացքում նույն դպրոցը ներկայացնող մասնակիցները միմյանց հետ չպետք է մրցեն/: Թիմային հաշվարկում գումարվում են յուրաքանչյուր դպրոցը ներկայացնող 3 մասնակիցների անհատական արդյունքները, և որոշվում է հաղթող թիմը , որը և իրավունք է ստանում մասնակցել հաջորդ՝ եզրափակիչ փուլին:

Ժամկետը՝ 2015թ. մարտի 25-ից մինչև ապրիլի 15-ը:

Անցկացման վայրը՝ ք. Մտեփանակերտ:

3-րդ փուլ - եզրափակիչ:

Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած 18 դպրոցների թիմերը: Այն մարզը, որտեղ տեղի կունենա մրցաշարի եզրափակիչ փուլը, իրավունք է ձեռք բերում եզրափակչում ներկայացնել ևս մեկ թիմ:

Անցկացվում է մեկ ընդհանուր մրցաշար՝ շվեյցարական մրցակարգով, որի արդյունքներով որոշվում են 3 հաղթողներ և լավագույն արդյունք ցույց տված 1 աղջիկ /մրցաշարի ընթացքում նույն դպրոցը ներկայացնող մասնակիցները միմյանց հետ չպետք է մրցեն/: Թիմային հաշվարկում գումարվում են յուրաքանչյուր դպրոցը ներկայացնող 3 մասնակիցների անհատական արդյունքները, և որոշվում է հաղթող թիմը:

Ժամկետը՝ 2015թ. մայիս:

6. Օլիմպիադայի փուլերի անցկացման կանոնները.

Մրցաշարի 2-4 փուլերն անցկացվում են ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով: Յուրաքանչյուր խաղացողին տրվում է 10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Շրջանային մրցակարգով անցկացվող թիմային մրցաշարերում հաղթողը որոշվում է ընդհանուր միավորների հանրագումարով: Միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում թիմի անդամների արդյունքները՝ ըստ տախտակների՝ նվազման կարգով, սկսած 1-ին տախտակից: Եթե բոլոր տախտակներում արդյունքները հավասար են, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ /մրցաշար-մրցախաղ/ կայծակնային խաղի կանոններով /յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե/:

Շվեյցարական մրցաշարերում անցկացվում է 6 տուր /18 կամ 21 մասնակցի դեպքում/ կամ 7 տուր /24 և ավելի մասնակիցների դեպքում/: Շրջանային փուլից սկսած՝ մեկնարկային ցուցակը կազմելիս հաշվի են առնվում արագ շախմատի վարկանիշները:

Միավորների հավասարության դեպքում, տեղերը որոշվում են ըստ՝

ա/ հատված Բուխհոլցի / - 1՝ մեկ ամենացածր արդյունքը/ ցուցանիշի,

բ/ գումարային Բուխհոլցի,

գ/ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Թիմային հաշվարկում հավասարության դեպքում, առավելություն է ստանում այն թիմը, որի մասնակիցը գրավել է մրցաշարում ավելի բարձր տեղ:

Հանրապետական մրցումների օրերի մասին շրջվարչակազմերի /քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության բաժինները լրացուցիչ կտեղեկացվեն:

ԿԱԶՄԿՈՍԻՏԵ

ԼՂՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 9-ԸՆԴՈՒՄԻ ԱՂԵՆՆԵՐԻ

Միքայել Համբարձումյան	նախագահ	ԼՂՀ ԿԳ նախարարի տեղակալ
Վարդգես Բաղրյան	նախագահի տեղակալ	ԼՂՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ
Ռայա Սուսայելյան	անդամ	ԼՂՀ ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչության պետ
Էդուարդ Խաչատրյան	անդամ	ԼՂՀ շախմատի ֆեդերացիայի խորհրդի անդամ
Բեյբուդ Մելքունյան	անդամ	ԼՂՀ ԿԳՆ պետական տեսչության տեսուչ
Արթուր Աթանեսյան	անդամ	ԼՂՀ ԿԳՆ ՌՀ ՖԴ և ՀԿՀԿ բաժնի գլխավոր մասնագետ
Արմեն Վահանյան	անդամ	Ստեփանակերտի շախմատի դպրոցի տնօրեն